ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՂՎԱՐԴ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 8

11 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2019թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 12 անդամներ:

Բացակա էին՝ Վարդան Մարտիրոսյանը, Լևոն Վարդանյանը:

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝ համայնքի ղեկավարի տեղակալ Կարեն Հարությունյանը, բնակավայրերի վարչական ղեկավարներ Արտաշես Ղարիբյանը, Կարեն Գալստյանը, Բաղդասար Թովմասյանը, Զորիկ Տիգրանյանը, Վարդան Հակոբյանը, աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ Թելուշ Հովհաննիսյանը:

Նիստը վարում էր համայնքի ղեկավար Նորայր Սարգսյանը:

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար Հասմիկ Զաքարյանը:

1.Լսեցին

ԵՂՎԱՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 11-Ի N 8 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆՈՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ/

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի՝ ***Եղվարդ համայնքի ավագանին որոշում է.***

1.Հաստատել համայնքի ավագանու 2019 թվականի սեպտեմբերի 11-ի N 8 նիստի օրակարգը.

1) Հողամասի վարձակալության պայմանագրում լրացում կատարելու մասին:

2) Համայնքային սեփականություն հանդիսացող գույքը օտարելու մասին:

3) Համայնքային սեփականություն հանդիսացող գույքը օտարելու մասին:

4) Համայնքային սեփականություն հանդիսացող գույքը օտարելու մասին:

5) Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում հողալցման աշխատանքներ կատարելու վերաբերյալ համաձայնություն տալու մասին:

6) Համայնքային սեփականություն հանդիսացող գույքը անհատույց տրամադրելու վերաբերյալ առաջարկությունը քննարկելու մասին:

7) Համայնքային սեփականություն հանդիսացող գույքը վարձակալության իրավունքով տրամադրելու վերաբերյալ համաձայնություն տալու և վարձավճարի չափ սահմանելու մասին:

8) Համայնքային սեփականություն հանդիսացող գույքը վարձակալության իրավունքով տրամադրելու վերաբերյալ համաձայնություն տալու և վարձավճարի չափ սահմանելու մասին:

9) Եղվարդ համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 26-ի N 77 որոշման մեջ լրացում կատարելու մասին:

10) Եղվարդ համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 26-ի N 79-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

11) Եղվարդ համայնքի 2019 թվականի բյուջեի պահուստային ֆոնդից գումար հատկացնելու մասին:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 54/

2.Լսեցին

ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆՈՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ/

Համաձայն <<Քաղաքացիական օրենսգրքի>> 627-րդ հոդվածի 2-րդ մասի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, հիմք ընդունելով Ռուբեն Հրաչիկի Բաբայանի դիմումը՝ 2005 թվականի մայիսի 24-ին իր հետ կնքած պայմանագրում լրացում կատարելու և գնման նախապատվության իրավունք ավելացնելու մասին՝ Եղվարդ համայնքի ավագանին որոշում է.

Զովունի գյուղում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 07-029-0039-0011 ծածկագրի 0.0020 հա մակերեսով հողամասի նկատմամբ 2005 թվականի մայիսի 24-ին Ռուբեն Հրաչիկի Բաբայանի հետ կնքած պայմանագրում կատարել համապատասխան լրացում և ավելացնել գնման նախապատվության իրավունք:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 55/

3.Լսեցին

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

/Զեկ. ՆՈՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ/

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի՝ Եղվարդ համայնքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի ներկայացրած առաջարկությանը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34, 35 կետերով սահմանված պայմաններով, ուղղակի վաճառքի միջոցով 2168046,4 դրամ ընդհանուր գնով օտարել Եղվարդ համայնք, գյուղ Զովունի, 41-րդ փողոց 23 հասցեում գտնվող, 07-029-0045-0074 կադաստրային համարի տակ գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 0,04746 հա բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասը և նրա վրա առկա 4,03 քմ արտաքին մակերեսով շինությունը կառուցապատումն իրականացրած անձին:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 56/

4.Լսեցին

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

/Զեկ. ՆՈՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ/

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի՝ Եղվարդ համայնքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի ներկայացրած առաջարկությանը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34, 35 կետերով սահմանված պայմաններով, ուղղակի վաճառքի միջոցով 358821 դրամ ընդհանուր գնով օտարել Եղվարդ համայնք, գյուղ Զովունի, 38-րդ փողոց 15-2/4-1 հասցեում գտնվող, 07-029-0034-0153 կադաստրային համարի տակ գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 0.00492 հա բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասը և նրա վրա առկա 16,26 քմ արտաքին մակերեսով բնակելի տունը և 1,81 քմ մակերեսով պարիսպը կառուցապատումն իրականացրած անձին:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 57/

5.Լսեցին

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

/Զեկ. ՆՈՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ/

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի՝ Եղվարդ համայնքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի ներկայացրած առաջարկությանը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34, 35 կետերով սահմանված պայմաններով, ուղղակի վաճառքի միջոցով 4988004 դրամ ընդհանուր գնով օտարել քաղաք Եղվարդ, Կոմիտասի փողոց 24/2 հասցեում գտնվող, 07-004-0070-0033 կադաստրային համարի տակ գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 0.02341 հա բնակավայրերի նշանակության հասարակական կառուցապատման հողամասը և նրա վրա առկա 227.5 քմ արտաքին մակերեսով առևտրի սրահը կառուցապատումն իրականացրած անձին:

Կողմ-11 Դեմ-1 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 58/

6.Լսեցին

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ՀՈՂԱԼՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆՈՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ/

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, հիմք ընդունելով Զովունու վարչական ղեկավարի բացատրագիրը՝ ***Եղվարդ համայնքի ավագանին որոշում է.***

1.Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի ներկայացրած առաջարկությանը՝ համայնքային սեփականություն հանդիսացող, Եղվարդ համայնքի Զովունի գյուղի կադաստրային քարտեզի 07-029-0143-0146 ծածկագրից 4,0007 հա հողամասում հողալցման աշխատանքներ իրականացնելու վերաբերյալ:

2. Զովունի գյուղի կադաստրային քարտեզի 07-029-0143-0146 ծածկագրից 4,0007 հա հողամասում հարթեցման և հողալցման աշխատանքների վերահսկողությունը դնել Զովունի բնակավայրի վարչական ղեկավարի վրա, կնքել պայմանագրեր համապատասխան կազմակերպությունների հետ օրենքով սահմանված կարգով:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 59/

7.Լսեցին

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆՈՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ/

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18 հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, հիմք ընդունելով Եղվարդ քաղաքի բնակիչ Ֆելիքս Ռուստամյանի

կողմից համայնքի ղեկավարին ներկայացված դիմումը՝ Եղվարդ համայնքի ավագանին որոշում է.

Հիմք ընդունել այն հանգամանքը, որ համայնքային սեփականություն հանդիսացող կիսակառույց շինությունը դիմումատուի ընտանիքի կողմից զբաղեցվել է ապօրինի կերպով, չկան խորքային ուսումնասիրություններ շինության վթարայնության, ինչպես նաև այն զբաղեցրած ընտանիքի սոցիալական վիճակի վերաբերյալ, նաև այն հանգամանքը, որ համայնքում առկա են նմանատիպ այլ ինքնակամ զավթումների դեպքեր և հարցը պահանջում է ընդհանուր միասնական իրավաչափ մոտեցում, նշված կառույցն անհատույց իրավունքով տրամադրելը ներկա փուլում համարել ոչ նպատակահարմար:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-3

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 60/

8.Լսեցին

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՉԱՓ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆՈՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ/

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի՝ ***Եղվարդ համայնքի ավագանին որոշում է.***

1. Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ քաղաք Եղվարդ, Սաֆարյան 90 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող Եղվարդի մշակույթի տան շենքի երկրորդ հարկի թիվ 5 սենյակը (ֆոե)՝ 214.3 քմ մակերեսով, 3 տարի ժամկետով, շաբաթական 4 օր՝ երկուշաբթի, երեքշաբթի օրերին ժամը 17:00-19:00, շաբաթ, կիրակի օրերին ժամը 13:00-15:00, պարի դասերի ուսուցման նպատակով Լիլիանա Ամրաստանի Սողոմոնյանին վարձակալության իրավունքով տրամադրելու վերաբերյալ:

2. Սահմանել տարածքի վարձակալության արժեքը 1 քմ-ի դիմաց 150 դրամ, գույքի վարձակալության ընդհանուր ամսական վճարը՝ 32145 դրամ:

3. Առաջարկել համայնքի ղեկավարին Լիլիանա Ամրաստանի Սողոմոնյանի հետ կնքել տարածքի վարձակալության պայմանագիր:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 61/

9.Լսեցին

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՉԱՓ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆՈՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ/

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18 հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի՝ ***Եղվարդ համայնքի ավագանին որոշում է՝***

1. Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը <<Ռեդինետ>> ՓԲԸ-ին մալուխներ անցկացնելու նպատակով Եղվարդ համայնքի Զովունի գյուղում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հենասյուներից 10-ը 3 տարի ժամկետով վարձակալության իրավունքով տրամադրելու վերաբերյալ:

2.Յուրաքանչյուր հենասյան համար վարձավճար սահմանել <<Ռեդինետ>> ՓԲԸ-ի համար ամսական 200 դրամի չափով, գույքի վարձակալության ընդհանուր ամսական վճարը՝ 2000 դրամ:

3. Առաջարկել համայնքի ղեկավարին <<Ռեդինետ>> ՓԲԸ-ի հետ կնքել գույքի վարձակալության մասին պայմանագիր:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 62/

10.Լսեցին

ԵՂՎԱՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N 77 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆՈՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ/

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման >> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի և <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 34 հոդվածի 1-ին մասի, հիմք ընդունելով Եղվարդ համայնքի <<Եղվարդի թիվ 1 մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի տնօրենի գրությունը՝ ***Եղվարդ համայնքի ավագանին որոշում է.***

Եղվարդ համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 26-ի <<Եղվարդ համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> N 77 որոշման N 5 հավելվածի 8-րդ, 9-րդ և 10-րդ կետերը շարադրել նոր, հետևյալ բովանդակությամբ.

Հ/Հ	Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորը	Դրույքը	Դրույքաչափը	Ընդամենը աշխատավարձը
1	2	3	4	5	6
8	լոգոպեդ	2	2	83000	166000
9	պարուսույց	3	2.5	83000	207500
10	ֆիզկուլտ հրահանգիչ	3	2.5	83000	207500

>>:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 63/

11.Լսեցին

ԵՂՎԱՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N 79-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆՈՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ/

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, <<Բյուջետային համակարգի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի՝ Եղվարդ համայնքի ավագանին որոշում է.

1.Պետական բյուջեից <<Եղվարդի թիվ 1 մանկապարտեզ>>ՀՈԱԿ-ի և <<Զորավանի մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի շենքերի հիմնանորոգման, Զովունի գյուղի խմելու ջրագծի կառուցման համար կատարվող ներդրումների, ինչպես նաև Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության կողմից իրականացվող <<Լավ տեղական ինքնակառավարում Հարավային Կովկասում>> ծրագրի շրջանակներում Եղվարդի համայնքապետարանում քաղաքացիների սպասարկման գրասենյակ ստեղծելու ծրագրին ներդրում կատարելու նպատակով Եղվարդ համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 26-ի << Եղվարդ համայնքի 2019 թվականի բյուջեն հաստատելու մասին>> N 79-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Բյուջեի եկամտային մասում՝

ա. պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ) հոդվածի <<0.0>> թիվը փոխարինել <<99299.4>> թվով.

բ. համայնքի բյուջե մուտքագրվող արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված միջազգային կազմակերպություններից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով հոդվածի <<0.0>> թիվը փոխարինել <<9501.0>> թվով:

2) Բյուջեի ծախսային մասում ՝

ա. 1.1-1 ծրագրի 5113 հոդվածի <<143016.0>> թիվը փոխարինել <<234221.4>> թվով.

բ. 6.3-1 ծրագրի 5112 հոդվածի <<26927.0>> թիվը փոխարինել <<42371.0>> թվով.

գ. 1.6-1 ծրագրի 5122 հոդվածի <<6158.0>> թիվը փոխարինել <<8309.0>> թվով:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 64-Ն/

12.Լսեցին

ԵՂՎԱՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆՈՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ/

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 90-րդ հոդվածի 6-րդ մասի, հաշվի առնելով այն հանգամանքը, որ բյուջեի ֆոնդային մասով կա կատարված կապիտալ ծրագրերի վճարման անհրաժեշտություն, <<Զովունու Ռուբիկ Բաղդասարյանի

անվան միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի հիմնադրման 50 ամյակի առթիվ հանդերձարանի վերանորոգման անհրաժեշտությունը՝ ***Եղվարդ համայնքի ավագանին որոշում է.***

1. Եղվարդ համայնքի 2019 թվականի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից հատկացնել 21000.0 հազար դրամ:

2. Եղվարդ համայնքի 2019 թվականի բյուջեի 9.2-1 ծրագրի 4637 հոդվածի <<2240.0>> թիվը փոխարինել <<3240.0>> թվով:

3. Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից մուտքերի <<20000.0>> թիվը փոխարինել <<40000.0>> թվով:

4. Բյուջեի ֆոնդային մասի 4.5-1 ծրագրի 5113 հոդվածի <<67649.0>> թիվը փոխարինել <<87649.0>> թվով:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 65/

Ավագանու անդամներ

ԱՇՈՏ ԱԶԻԶՅԱՆ

ՍԵՐԺԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԱՐՇԱԿ ԳԱԼՍՏՅԱՆ

ԼԱՎՐԵՆՏԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՌԱՖԻԿ ԶՈՀՐԱԲՅԱՆ

ՍՐԱՊ ԹՈՎՄԱՍՅԱՆ

ԿԱՐԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԳՈՌ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԱՆԴՐԱՆԻԿ ՄԿՐՏՉՅԱՆ

ԱՐԱՄ ՍԱՐԳՍՅԱՆ

ՊԵՏՐՈՍ ՍՏԵՓԱՆՅԱՆ

Համայնքի ղեկավար
ՆՈՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ _____

Նիստն արձանագրեց՝ Հասմիկ Զաքարյանը _____